

## ՀՈԳԵԻՐՈՒԿԱՆԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երեքշաբթի, Ապրիլ 13ին, 2010, Առաջնորդարանի մէջ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք Տէրտէրեանի Նախագահութեամբ, գումարուեցաւ Թեմիս Հոգեւորականաց Վարչական Ժողովը՝ Ատենապետութեամբ Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեանի:

Ժողովի ընթացքին գործադրուեցաւ պատրաստուած օրակարգը: Սրբազան Հայրը իր զեկոյցը ներկայացուց, տեղեկութիւններ տուաւ Ապրիլ 28էն մինչեւ Մայիս 1, 2010, Առաջնորդարանի մէջ գումարուելիք Հոգեւորականաց Տարեկան Ժողովին, Տիկնանց Միութեան Համագումարին եւ Թեմական 83րդ Պատգամաւորական Ժողովի մասին: